

ՀՄԱՅԱԿ ՀԱԿՈՐՅԱՆԻ ԻՆՔՆԱԴԻՄԱՆԿԱՐՆԵՐԸ

ԱՐՄԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ*

Ինքնադիմանկարը, թերևս, կերպարվեստի ժանրերից ամենաբարդն է: Ինքնանկարն ինքնաարտահայտման միջոց է: Այստեղ նկարիչը պատկերում է իր անձը, իր աշխարհը, իր բնավորությունը, ինչպես նաև, կարծում ենք, դրանով ինչ-որ տեղ ինքնահաստատվում է: XIX դ. վերջի – XX դ. սկզբի հայ ռեալիստական դպրոցի նշանավոր ներկայացուցիչ, թիֆլիսահայ նկարիչ Հմայակ Հակոբյանի ինքնադիմանկարներն արված են բարձր տեխնիկայով, կատարյալ վարպետությամբ, ակադեմիական սկզբունքով: Այս գեղանկար ու գծանկար աշխատանքների միջոցով կարելի է բացահայտել նկարչի ստեղծագործական աշխարհը: Հայաստանի ազգային պատկերասրահի ֆոնդերում պահվում է Հմ. Հակոբյանի վեց ինքնադիմանկար: Դրանցում հստակ երևում են նկարչի տրամադրությունը, ներաշխարհը, մտածելակերպը: Ինքնապատկերվելու միջոցով Հմ. Հակոբյանը փորձել է ինքն իրեն գտնել: Նրա ինքնադիմանկարների ֆոնդ դարչնագույն է՝ շագանակագույն երանգավորմամբ, որը հատուկ է դասական ռեալիստական գեղանկարչությանը: Հմայակ Հակոբյանի ինքնադիմանկարները նրա հոգու արտացոլումն են:

Քանալի բառեր՝ Հմայակ Հակոբյան, ինքնադիմանկար, ինքնաարտահայտում, գծանկար, գեղանկար, դիմահայաց, կիսադեմ:

Ներածություն

Ինքնադիմանկարը, թերևս, կերպարվեստի ժանրերից ամենաբարդն է: Ինքնանկարն ինքնաարտահայտման միջոց է, որտեղ նկարիչը պատկերում է իր անձը, իր աշխարհը, իր բնավորությունը, ինչպես նաև, կարծում ենք, դրանով ինչ-որ տեղ ինքնահաստատվում է: Իսկ եթե ստեղծագործողը նկարում է տարբեր տարիքներում, դա արդեն համեմատության համար է, թե ինչպես է տարիների ընթացքում նա փոխվում հոգեպես և ֆիզիկապես: Ինչ-որ տեղ նաև միտում կա արտաքին տեսքը սերունդների հիշողության մեջ թողնելու: Նկար-

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սիյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի կրտսեր գիտաշխատող, armine.pet21@mail.ru, հոդվածի ներկայացնելու օրը՝ 01.02.2023, գրախոսելու օրը՝ 10.03.2023, տպագրության ընդունելու օրը՝ 10.05.2023:

րիչը պատկերում է ոչ միայն իր արտաքինը, այլ նաև ընդգծում է սեփական ներաշխարհի որոշ առանձնահատկություններ:

Ինքնադիմանկարին դիմել են բազմաթիվ նկարիչներ, ոմանք ստեղծել են մեծ քանակությամբ ինքնանկարներ, որոնց կերտման ընթացքում սովորաբար օգտագործվում է հայելի, քանի որ այն օգնում է ավելի մանրամասն արտացոլել նկարչի «հայտնի» և «անհայտ» աշխարհը:

Նկարչի համար ինքնանկարը միջոց է՝ իր կերպարը խորագնին վերլուծության ենթարկելու, հասկանալու, կերպարվեստի միջոցով ցույց տալու իր անհատականությունը, անգամ վերածվելու յուրօրինակ օրագրի՝ արտացոլելով մարդկային հոգեվիճակները, կյանքի փուլերը, նաև ներկայացնելով իր ապրած ժամանակաշրջանը:

Ինքնադիմանկարի ժանրի հետազոտող, արվեստաբան Գ.Լ. Վասիլևա-Շլյապինան առանձնացնում է ինքնադիմանկարի երկու հիմնական տեսակներ՝ պրոֆեսիոնալ, որտեղ նկարիչը պատկերված է աշխատանքի ընթացքում, և անձնական, որտեղ բացահայտվում են նրա բարոյական և հոգեբանական հատկությունները: Արվեստաբանը նաև առաջարկում է ավելի մանրամասն դասակարգում.

1. տեղադրված ինքնանկար (вставной автопортрет). նկարիչը պատկերված է սյուժետային միջավայրում,

2. ներկայացուցչական կամ խորհրդանշական ինքնադիմանկար (представительский или символический автопортрет). Նկարիչն իրեն ներկայացնում է որպես պատմական անձ կամ կրոնական հերոս,

3. խմբային դիմանկար (групповой портрет). նկարիչը պատկերված է ընտանիքի անդամների կամ այլ իրական անձանց հետ,

4. առանձին կամ բնական ինքնանկար (отдельный или естественный автопортрет). նկարիչը ներկայացված է միայնակ:

Պրոֆեսիոնալ ինքնանկարում նկարիչն իրեն պատկերում է աշխատանքի ժամանակ, իսկ անձնական ինքնանկարը փոխանցում է հեղինակի հոգևոր կերպարը¹:

Գլաձորի համալսարանի մանրանկարչության խոշորագույն ներկայացուցիչ, գրիչ, տաղասաց ու մանրանկարիչ Թորոս Տարոնացին

¹ Տե՛ս.: **Васильева Г.**, Суриков портретист, Автореф. дисс. кандидата искусствоведения, Л., 1989.

դեռևս 1318 թ. պատկերել է իր ինքնանկարը: Մանրանկարչի ձեռքը դիպչում է մագաղաթին, և բնությունը կենդանանում է, բազմագույն ու բազմաձև բույսերը ծաղկում են, թռչունները սկսում են երգել, կենդանիները զրուցում են:

Արվեստաբան Մ. Այվազյանի խոսքով՝ «Ինքնադիմանկարը հնարավորություն է ընձեռում ծանոթանալու տարբեր սերունդների հայ նկարիչների կերպարին՝ ճանաչելու նրանց արտաքնապես և հաղորդակից դառնալու նրանց ներաշխարհին, հասկանալու ստեղծագործական սկզբունքները, բարոյագիտական և գեղագիտական դիրքորոշումները... Ինքնադիմանկարի առանձնահատկությունն այն է, որ հանդիսատեսի հետ նա խոսում է առաջին դեմքով, և այդ մենախոսությունն անմիջականորեն արտահայտում է նկարչի ինքնագիտակցությունը, սեփական անձի արժևորումը... սակայն անկախ նրանից, թե ինչպիսին կլինի անձի իմաստավորման գործընթացը, ինքնադիմանկարի թեման անփոփոխ է՝ «Ժամանակի և իր մասին»²:

Ինքնադիմանկարներ ստեղծել են մեզ հայտնի բազմաթիվ նկարիչներ: Այս աստղաբույլի մեջ են Ջոտտո դի Բոնդոնեն, Մագաչչոն, Լեոնարդո դա Վինչին, Միքելանջելոն, Ռաֆայելը, Տիցիանը, Ռեմբրանդտը, Ալբրեխտ Դյուրերը, Վինսենտ վան Գոգը, Ֆրանցիսկո Գոյան, Ֆրիդա Կալոն, Էդգար Դեգան, Բորիս Կուստոդինը, Կազիմիր Մալևիչը, Իլյա Ռեպինը, Կարլ Բրյուլովը և այլք:

Հայ կերպարվեստում ուշագրավ են Հարություն Շամշինյանի, Ռաֆայել Շիշմանյանի, Ստեփան Աղաջանյանի, Հմայակ Արծաթպանյանի, Հովհաննես Այվազովսկու, Մարտիրոս Սարյանի, Լավինիա Բաժբետուկ-Մելիքյանի, Հմայակ Հակոբյանի և այլ նկարիչների ինքնադիմանկարները:

Հիմնական նյութի շարադրանք

Մեր նյութը նվիրված է XIX դ. վերջի – XX դ. սկզբի հայ ռեալիստական դպրոցի նշանավոր ներկայացուցիչ, թիֆլիսահայ նկարիչ Հմայակ Հակոբյանի ինքնադիմանկարների ուսումնասիրմանը: Հմայակ Ստեփանի Հակոբյանը (1871-1939) ծնվել է Տրապիզոնում՝ հարուստ

² Айвазян М., Автопортрет в армянской советской живописи. Четвертый международный симпозиум по армянскому искусству, Ереван, изд. АН Арм ССР, 1985, стр. 7.

վաճառականի ընտանիքում: 1886-1891 թթ. նկարիչը սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում Հարություն Շամշինյանի արվեստանոցում, այնուհետև 1891-1894 թթ. մասնագիտական կրթություն է ստացել Մյունխենի գեղարվեստի ակադեմիայում:

Հմ. Հակոբյանը ստեղծագործել է բոլոր ժանրերով՝ յուրաքանչյուրի մեջ դրսևորելով իր արվեստի ներուժը, արտահայտչամիջոցները, գեղարվեստական մտածողությունը: Հատկանշական են դիմապատկերները, որոնք ներկայացնում են տվյալ ժամանակաշրջանի մարդու կերպարը՝ իր հույզերով, մտորումներով, զգացմունքներով: Բարձր տեխնիկայով և կատարյալ վարպետությամբ աչքի են ընկնում նկարչի՝ ակադեմիական սկզբունքով արված ինքնանկարները, որոնք շատ խոսուն են, և այս գեղանկար ու գծանկար աշխատանքների միջոցով կարելի է բացահայտել նկարչի ստեղծագործական աշխարհը:

Հայաստանի ազգային պատկերասրահի ֆոնդերում պահվում է Հմ. Հակոբյանի վեց ինքնադիմանկար: Դրանցում նշմարվում են նկարչի տրամադրությունը, ներաշխարհը, մտածելակերպը: Ինքնապատկերվելու միջոցով Հմ. Հակոբյանը փորձել է գտնել ինքն իրեն: Նրա ինքնադիմանկարների ֆոնդ դարչնագույն է՝ շագանակագույն երանգավորմամբ, որը հատուկ է դասական ռեալիստական գեղանկարչությանը: Հմ. Հակոբյանի ինքնադիմանկարները չափազանց մտածկոտ են, իսկ դիմագծերը և հատկապես հայացքը՝ խոր արտահայտությամբ: Նկարիչը տալիս է իր կերպարի հոգեբանական յուրովի վերլուծությունը: Ֆոնի երփնագիրն անքակտելիորեն կապված է դեմքի և հագուստի գույների հետ, որոնք իրենց նուրբ միաձուլմամբ ներդաշնակորեն համադրվում են սահուն վրձնահարվածների հետ, որտեղ բացակայում են լուսաստվերային կտրուկ հակադրությունները: Նրա ինքնադիմանկարները կրում են միայնության խոր դրոշմ: Արվեստագետի ինքնանկարները կարծես երկխոսություն են սեփական անձի հետ, մտածմունք կյանքում իր դերի մասին: Գունապնակը հանդես է գալիս մուգ նկարագրով՝ զուգորդված լուսաստվերային մոդելավորմամբ:

Վաղ շրջանի աշխատանքներից է 1896 թ. վրձնած ինքնադիմանկարը (նկ. 1), որտեղ 25-ամյա Հմայակ Հակոբյանը պատկերված է դիմահայաց, սպիտակ վերնաշապիկով և սև բաճկոնով: Այստեղ նա ներկայացել է մտավորականին վայել վեհ կերպարով, որը միաժա-

մանակ ավյունով լեցուն, վճռական տղամարդու տպավորություն է թողնում: Նրա կերպարը կարելի է համեմատել դասական գրականության հերոսի հետ, որը գեղեցիկ, վայելչագեղ, երիտասարդ տղամարդ է՝ բեղմնորուքով, խորաթափանց, փայլուն աչքերով. նա խոհուն, խորագնին հայացքով նայում է դիտողին: Զգացվում է, որ ապագա նկարիչը լի է վճռականությամբ և ներուժով: Գծանկարն աչքի է ընկնում դետալային, ճշգրիտ, հստակ ձևերով, արտահայտչականությամբ և մեծ վարպետությամբ: Կոլորիտում գերակշռում է սև ֆոնը, սակայն այդ մուգ երանգների միջից ասես լույս է ճառագում: Նկարիչը ստեղծել է սևի ու սպիտակի հիմնալի համադրություն:

1900-1910 թթ. ստեղծած ինքնանկարը (նկ. 2) տրված է կիսադեմով, հայացքն ուղղված է դեպի աջ: Աշխատանքը պատկանում է նկարչի ստեղծագործական վաղ շրջանին: Այստեղ արվեստագետը ներկայացված է աշխատանքային հագուստով և տեսքով: Գունային գամման կառուցված է սրճադարչնագույն, շագանակագույն երանգավորումներով: Արվեստագետն ինքն իրեն պատկերել է ծխելիս: Հետաքրքրական է, որ նկարում չի արտացոլել ձեռքերը: Տվյալ գեղանկարում իշխում է սրճագույնը: Նկատվում է ճեպանկարային մոտեցում՝ տվյալ պահի տրամադրությամբ, կարծես թե մի վրձնահարվածով նկարիչն ամբողջացրել է իր կերպարը: Նա մտորումների մեջ է՝ տոգորված նոր ստեղծագործություններ պատկերելու մղումով: Համեմատելով համաշխարհային արվեստի մեծագույն վարպետ Ռեմբրանտ վան Ռեյնի (1606-1669)՝ 1630 թ. ինքնադիմանկարի հետ՝ կարող ենք նկատել կոլորիտային և ռճային նմանություններ: Հմայակ Հակոբյանի ինքնանկարը կառուցված է կիսատոների միջոցով, շեշտադրված է ծխախոտի գլանակը: Հմ. Հակոբյանը նույն գուներանգների միջոցով կարողացել է երևան հանել իր կերպարի մտածկոտությունը և լոջությունը: Ռեմբրանտը ոչ միայն իր ժամանակաշրջանն է ներկայացրել, այլև ցուցադրել է իր դիրքը հասարակության մեջ:

Դիմագծերի լուսաստվերային մեղմ ու նուրբ անցումներով տպավորիչ է 1915 թ. պատկերած ինքնանկարը (նկ. 3), որը Հմ. Հակոբյանի միջին շրջանի աշխատանքներից է: Նկարիչը ներկայացված է ծխամորճով, և կտավի ծախ հատվածն ամբողջովին պատված է ծխի քուլաներով: Կոմպոզիցիոն կառուցվածքում նրա կիսադեմ պատկերն է,

արվեստագետի հայացքն ուղղված է դեպի ձախ, գերակշռում է շագանակագույն և դարչնագույն երանգավորումը: Նկարիչը կարողացել է ֆիքսել իր արտահայտիչ, խոր հայացքը: Հմ. Հակոբյանի գունապնակը շատ նման է 1632 թ. Ռեմբրանդտի վրձնած ինքնադիմանկարի երվնագրին: Հետաքրքիր է, որ երկու նկարիչներն էլ գունային նույն լուծումներն են գտել. Ռեմբրանդտի կտավում ընդգծված է սպիտակ, ճոխ դարձածալերով օձիքը, իսկ Հմայակ Հակոբյանը պատկերել է սպիտակ վերնաշապկի մի հատվածը: Երկուսն էլ բերետով են՝ այն տարբերությամբ, որ Ռեմբրանդտի հանդերձանքը ճոխ է և շքեղ: Մեր առջև հառնում են դիմապատկերներ, որոնք առինքնում են վեհաշուք տեսքով, կերպարային յուրօրինակ դրսևորմամբ: Հմ. Հակոբյանը կարևորում է դիմագծերի մանրամասն վերարտադրումը. հատկապես ռեալիստորեն են ընդգծված աչքերը, որոնք, անշուշտ, մարդու հոգու հայելին են: Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ Ռեմբրանդտի ինքնանկարում առկա է նաև ծեռքի պատկերը: Հմ. Հակոբյանը կարևորում է դիմագծերի ճշգրիտ փոխանցումը՝ շեշտադրելով աչքերի արտահայտչականությունը, բեղերը և մազերը:

Ռուս ռեժիսոր Ա. Էֆրոսը նշել է 2 տեսակի ինքնանկարների առկայությունը. «Մի տեղում նկարիչը զբաղված է իր արտաքին տեսքով, մյուսում՝ իր ներաշխարհով... Այնտեղ ինքնաարտացոլում է, այստեղ՝ ինքնամեկնաբանություն, մեկը հանգիստ հայտարարում է, մյուսը՝ հուզված խոստովանում»³: Այս պարագայում թե՛ Ռեմբրանդտ վան Ռեյնը, թե՛ Հմ. Հակոբյանը աշխատել են հավասարապես ի ցույց դնել իրենց արտաքին տեսքն ու ներաշխարհը:

Կերպարային յուրահատուկ մեկնաբանմամբ աչքի է ընկնում անթվակիր ինքնանկարը (նկ. 4), որը, կարծում ենք, վաղ շրջանի աշխատանքներից է: Հմ. Հակոբյանն իրեն վրձնել է թիֆլիսյան ֆեսով, կարմրամանուշակագույն կոլորիտով: Նկարիչը հավատարիմ է մնացել ռեալիստական ռճի սկզբունքներին. պատկերը տրված է կիսադեմով, հայացքն ուղղված է դեպի ձախ: Ուշագրավ է, որ այս ինքնանկարը ստորագրություն ունի, մինչդեռ մյուս գործերում այն բացակայում է:

³ Крузе С., Автопортрет как форма самопознания личности художника, Ростов-на-Дону, 2004, стр. 16. Эфрос А., Автопортреты Пушкина, Мастера разных эпох, Москва, 1979, стр. 115.

Ինքնադիմանկարների այս շարքն ամբողջացնում է անթվակիր ևս մեկ ինքնադիմանկար (նկ. 5): Այն մատիտանկար է, կերպարը հանդես է գալիս ծխամորժով, պինդ սեղմած շուրթերով, և կարծես բեղերի մեջ թաքնված ծխամորժը տիպարին հաղորդել է խստություն: Կրկին տրված է կիսադեմով, խորաթափանց հայացքն ուղղված է դեպի ծախ: Ինքնանկարը հոգեբանական ճշմարիտ մարմնավորում ունի: Գծանկարն արված է ճշգրիտ, լակոնիկ, հստակ և ռեալիստական վարպետությամբ:

Կարծում ենք՝ նկարչի ինքնադիմանկարների շարքից է ուշ շրջանի այս անթվակիր կտավը (նկ. 6): Հմ. Հակոբյանն այն վրձնել է իրեն հատուկ կոլորիտով և ներդաշնակ լուսաստվերային անցումներով՝ շեշտադրելով ճակատի կնճիռները: Ասես կյանքի դժվարություններն ակոսված են նրա մտահոգ ու շփոթված դեմքին: Աչքերի մեջ կա մեծ տառապանք ու թախիծ:

Ընդհանրապես նրա կերպարում դրսևորվել են արվեստագետի հոգու վեհությունն ու ազնվությունը: Հետաքրքրական է, որ նկարիչը նախընտրել է իրեն պատկերել կիսադեմով, հազվադեպ են հանդիպում դիմահայաց օրինակներ: Հմ. Հակոբյանն օգտագործում է շագանակագույն (բացից մինչև մուգ երանգները), դարչնագույն, սրճագույն, մոխրագույն, կարմրամանուշակագույն, սև և սպիտակ գույները:

Եզրակացություն

Արվեստագետի ստեղծագործական տարբեր շրջաններում ստեղծված ինքնադիմանկարների գունային լուծումներն անփոփոխ են, նկարիչը հարազատ է մնում կերպարվեստի իրապաշտական սկզբունքներին և իրեն հատուկ գունապնակին:

Հմայակ Հակոբյանի ինքնադիմանկարները նրա հոգու արտացոլումն են: Այս առումով արժե նշել լուսանկարչուհի Քեթի Լիի արտահայտած միտքը. «Ինքնանկարչության միջոցով մարդը կարողանում է բացահայտել իր իսկ հոգու խորքերը»⁴: Ինքնաճանաչումը շատ կարևոր է նկարչի համար: Դա մի քայլ է՝ նրան գնահատելու, ճանաչելու նրա գործունեությունը, ներաշխարհը, մարդկային բնութագիրը: Այս վեց ինքնադիմանկարների միջոցով Հմ. Հակոբյանը բացահայ-

⁴<https://blognews.am/arm/news/142487/sqancheli-inqnankarner-lusankarich-qeti-lii-koxmic-24-photo.html> դիտում՝ 23.10.2022

տում է իր հոգու խորքում եղած ցավը, տառապանքը, մտահոգությունները: Մեր կարծիքով ինքնադիմանկարները առեղծվածներ են, որոնք պետք է բացահայտել:



Նկ. 1 Ինքնադիմանկար (1896), կտավ, յուղաներկ, 49x31,5 սմ



Նկ. 2 Ինքնանկար (1900-1910 թթ.), կտավ, յուղաներկ, 24x19,7 սմ



Նկ. 3 Ինքնանկար (1915), կտավ, յուղաներկ, 41x33 սմ



Նկ. 4 Ինքնանկար, կտավ, յուղաներկ, 42x31,5 սմ



Նկ. 5 ինքնանկար, թուղթ,
մատիտ, 24x20 սմ



Նկ. 6 ինքնանկար, կտավ,
յուղաներկ, 46x37,5 սմ

АВТОПОРТРЕТЫ АМАЯКА АКОПЯНА

АРМИНЕ ПЕТРОСЯН

Автопортрет, пожалуй, самый сложный жанр изобразительного искусства. Это попытка самовыражения, отражения собственного «я», своего мира, своего характера, а также, на наш взгляд, своеобразного самоутверждения. Автопортреты известного представителя армянской реалистической школы конца XIX – начала XX вв. Амаяка Акопяна выполнены мастерски, в соответствии с принципами академической живописи. Работы художника в этом жанре являются отражением его тонкого творческого восприятия человека. В фондах Национальной галереи Армении хранится шесть автопортретов художника, каждый из которых являет собой попытку отражения мировосприятия творца, его настроения и характера. Автопортреты А. Акопяна – это поиск себя. Доминантой цвета в этих работах являются оттенки коричневого, столь характерного для классической реалистической живописи. Его полотна-автопортреты передают сложную гамму духовных пластов их создателя.

Ключевые слова: Амаяк Акопян, автопортрет, самовыражение, рисунок, картина, анфас, профиль.

SELF-PORTRAITS OF HMayak HAKOBYAN

ARMINE PETROSYAN

Self-portrait is, perhaps, the most complicated genre of fine art. It is an attempt of self-expression, reflection of one's own self, one's own world, own character, and, in our opinion, a kind of self-affirmation. Self-portraits of the famous representative of the Armenian realistic school of the late XIX – early XX centuries Hmayak Hakobyan are executed masterfully in accordance with the principles of academic painting. The artist's works in this genre reflect his fine artistic perception of man. The funds of the National Gallery of Armenia house six self-portraits of the artist, each of them being an attempt to reflect the worldview of their creator, his mood and character. H. Hakobyan's self-portraits are a search of one's self. Shades of brown, so characteristic of classical realistic painting, are dominant here. His self-portraits convey the complex range of their creator's spiritual layers.

Key words: Hmayak Hakobyan, self-portrait, self-expression, drawing, painting, full face, profile.